

ՄԵԼԿ

Տարեկան դիմել 10 թուրի, կէս տարվանը 6 թուր.

Առանձին համարները 7 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».

կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ

(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են

իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԻԱԿՈՒԹԻՒՆ

Պատերազմ և խաղաղութիւն. — Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նպաստ սովորանքին և գաղթականներին. Ուսուցչական խնայողական դրամաբեր. Նա-մակ խմբագրութեան. Ներքին լուրեր. — ԱՐՏԱ-ՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Եւրոպայի և Զինատանի պատերազմը. Նամակ Գերմանիայից. Արտաքին լուրեր. Հեռագրի մասին. — ԲՈՐՍԱ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒ-ԹԻՒՆՆԵՐ. — ԲՍԱՍՈՒՐԱՅԱՆ. Կովկասեան կու-րորաները.

ՊԱՏԵՐԱԶՄ ԵՒ ԽԱՂԱՊԻՒԹԻՒՆ

Երբեք ազգերը այնպիսի մեծ պատրաս-տութիւններ չեն ունեցել պատերազմ մը-ղիւն համար, որքան այժմ բայց դուք էր-բեք Նոյն այդ ազգերը այնքան չեն գնա-հատել խաղաղութեան բարիքները, ինչպէս այժմ Ամենքը ցանկանում են, որ խաղա-ղութիւնը չը խանգարվի, որ կանոնաւոր կուլտուրական զարգացումը չընդհատվի, բայց մի և Նոյն ժամանակ ամենքն էլ իրանց ֆինանսների նշանաւոր մասը ծախսում են պատերազմական պատրաստութիւնների վը-րա: Իւրաքանչիւր պետութիւն իրան յայ-տարարում է խաղաղութեան պաշտպան և իր պատերազմական պատրաստութիւնները արգելադրում է նրանով, որ նա ստիպված է այդ անել, որպէս զի հարևան ազգերի պատերազմական ձգտումները կարողանայ չէզոքացնել և այդպիսով ցանկալի խաղա-ղութիւնը պահպանել:

Պատերազմական պատրաստութիւնները հարկւր միլիոններ են խլում պետութիւն-ներից, սպառում են ժողովուրդների ոյժը և անկարելի են դարձնում պետական այն-պիսի հանրօգուտ ձեռնարկութիւններ, ո-րոնք պէտք է բարձրացնէին ժողովրդի

արդիւնաբերական ոյժը և մտաւոր զարգա-ցումը:

Ամեն մի ժողովուրդ ուրախութեամբ զօհաբերութիւններ է անում, երբ պէտք է պաշտպանի իր հայրենիքը, երբ պէտք է հարևան ազգերի թշնամական արշաւանք-ներին դիմադրի, բայց երբ կառավարու-թիւնները չեն ձգտում շուտով վերջ տալ միջազգային թիւրիմացութիւններին, երբ նրանք շատ դիւրապրելու և բժախնդիր են լինում ամեն մի թեթիւ իրողու-թեան կամ ընդհարման առիթով, երբ պետութիւններից իւրաքանչիւրը ամեն մի դէպքում կամենում է ցոյց տալ իր հզօր-նակութեան մեծութիւնը, իր կամքի ոյժը այն ժամանակ ժողովուրդները բողոք են բարձրացնում ներկայ դրութեան դէմ, հա-մարելով միջազգային յարաբերութիւնները սխալ հիմունքների վրա դրած, իսկ պա-տերազմական պատրաստութիւնները ար-դիւնք դիպրոմատիայի քաղաքական անըն-դունակութեան:

Աւելորդ զինազորութիւն, աւելորդ բժախնդրութիւն, ազգային ինքնասիրու-թեան աւելորդ արտայայտութիւն, — սա խնդիր մի կողմէն է: Բայց կայ մի ուրիշ կողմ, որ հիմնական նշանակութիւն ունի պետութիւնների յարաբերութիւնների հա-մար. դա ազգերի արդար պահանջների և էական շահերի խնդիրն է, շահեր, որոնք ճշմարտ են ամուսն ժամանակակից միջազ-գային յարաբերութիւնների շնորհիւ և որոնք իրանց արժանաւոր լուծման են սպասում: Մինչև որ բաւարարութիւն չը ստանան այդ պահանջները և շահերը, միշտ ժողովրդի կուռնան ընդհարման առիթ-ները:

Միջին դարերում ազգերը յաճախ ծնում

էին զործ դնում մէկը միւսի կրօնական զգաց-մունքների և զաղափարների վրա: Շատ ընդհարումների պատճառներ եղել են կրօ-նական անհամաձայնութիւնները: Բայց ա-հա ազգերը եկան այն եզրակացութեան, որ կրօնը չը պէտք է ծնշվի, որ պէտք է ազատութիւն տրվի դաւանութիւններին, որպէս զի ամեն տեղ հաստատվի համերոգ ոգի, խղճի ազատութիւն: Եւ ահա այն օ-րից, երբ հաստատվեց ազգերի մէջ այդ համերոգ և մտաւ պետական կեանքի զործարարութեան մէջ, վերացաւ, չքացաւ ճառագողութեան և ստորկութեանը. և ահա այդ ընդհանուր համերոգութեան ազդեցութեան տակ ամեն տեղ սկսեց հայածվել գերեզմա-նաւորութիւնը:

Այնքան դարու վերջերից և այս դա-րու սկզբներին ազգայնական խնդիրները ստացան մեծ նշանակութիւն միջազգա-յին քաղաքականութեան համար: Այժ-մեան ուժեղ և ինքնուրոյն գերմանիան դեռ նորոգոյն անցնելով դարձված էր իր լեզուի և ազգային ոգու ազատութեան խնդրով: Իտալական և ունիւարական մեծ ազգութիւնները, աւստրիական և բալկանեան թերակղզու փոքր ազգութիւնները մէկը միւսի հետեւից յարուցանում էին իրանց լեզուի և բարոյական շահերի ազատութեան խնդիր-ները, և կամաց կամաց հասան իրանց նը-պատակներին:

Որչափ պետութիւնները վաղորդը հոգս էին տանում, որ իւրաքանչիւր անհատի, համայնքի, ազգութեան էական պահանջ-ները և հիմնական շահերը պաշտպանված լինեն, այնքան աւելի նրանք նպաստում

էին խաղաղութեան գաղափարին, այնքան աւելի նրանք ոչնչացնում էին այն տարրե-րը, որոնցից կարող էին ապագայում ծագել ընդհարումներ, կռիւներ:

Այն, ինչ որ սանցիւք կրօնի և լեզուի մասին, վերաբերում է և ուրիշ էական շահերին, քաղաքացու անձնաւորութեան, մտքի համերոգութեան, և տնտեսական զարգացման:

Գերմանիան, Աւստրիան և Իտալիան կա-րողացան միմեանց մէջ մաքսային միութիւն կազմել. գերմանիան և Ռուսաստանը ա-ռանձին, Աւստրիան և Ռուսաստանը առան-ձին մաքսային դաշնակցութիւններ կապե-ցին միմեանց մէջ: Շուտով տեղի կունե-նան նոր դաշնակցութիւններ ուրիշ ազգե-րի մէջ:

Ուրեմն եթէ ազգերը անկեղծ կամենան միմեանց յարգել, միմեանց շահերը աչքի առաջ ունենալ, կարող են կամաց կամաց հոգ պատրաստել ընդհանուր դաշնակցու-թիւնների համար, որոնք պարտաւորեցու-ցել կը լինէին բոլորի համար:

Պարզ է մեր ասածից, որ խաղաղութիւն պահպանելու համար, խաղաղութեան գա-ղափարի յաղթանակի համար պէտք է պետութիւնները ոչ միայն խօսքով հա-ւատացնեն միմեանց, որ նրանք պաշտպան են խաղաղութեան, այլ և դիմեն զործնա-կան միջոցների, կամաց կամաց վերացնելով այն բոլոր հանգամանքները, որոնք հակա-ռակ են ազգերի և ժողովուրդների էական հիմնական պահանջներին, զսպելով իրանց ազահոլութիւնը և գիշանկով ուրիշ ազգերի արդար պահանջներին:

Երբ այդ համադրմանը կը տիրապետի, երբ պետութիւնները կը պայմանաւորվեն հիմնական խնդիրների մասին, այն ժամա-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԿՈՒՐՈՐԱՆԵՐԸ

Կովկասեան հանքային ջրերը և նրանց բժշկա-կան ու առողջանոց միջոցները օրից օր այնքան ժողովրդականութիւն են դառնում, որ ներկայումս արդէն սկսել են լուրջ կերպով մրցել եւրոպական յայտնի կուրորաների հետ:

Կեանքի մէջ, մասնաւոր մեր այժմեան կեան-քի և մեր վարած այժմեան նիստ ու կացի մէջ, շատ կարեւոր տեղ է ընդուն այն հարցը, թէ ո՞ր գնալ ամառը հանգստանալու և բժշկվելու: Ոչ միայն ֆիզիկական, այլ և բարոյապէս ցաւազար, տանջվող մարդկութեան համար անհրաժեշտ է բժշկութիւնը, հանգստութիւնը, թաւմ օդ ծծելը, մի յայտնի ժամանակ քաղաքից դուրս ապրելը: Թաւմ օդ ծծելու, բնութեան ազատ ծոցի մէջ հանգստանալու պէտքը դրում են Նոյն իսկ ա-ռողջները, բայց վերջիններս համար բաւական է լաւ, առողջարար օդ ունեցող տեղեր, ավա-նոցները գնալ, այն ինչ հիւանդների համար պէտք է բժշկվել. իսկ բժշկութեան համար հարկաւոր են յայտնի յարմարութիւններ, առանց որոնց Նոյն իսկ ամենապաւ օդը, տեղը շատ քիչ օգուտ կա-րող են տալ: Կան հիւանդութիւններ, որոնց բժշկութիւնը ֆարմացեւտիական միջոցներով ձեռք չէ բերվում. այդպիսի հիւանդներին բժիշկները, իբրեւ վերջին միջոց, ուղարկում են հանքային ջրերը և մեղանում, Ռուսաստանում, սովորաբար ուղարկում են արտասահմանեան հանքային ջրե-րը—հաշակաւոր Վիլնի, Կարլսբադ, Կիսսէնգէն, Մարիէնբադ, Էմս և գնալու Terrain-Curort-ները:

Սակայն վերջին տասնեակ տարիներում ուս-հասարակութիւնը, մասնաւոր արիստոկրատիա-կան դասակարգը սկսել է յիշել, որ ինքն ունի հայրենի բուժարան—հանքային ջրեր. ուստի բժ-

ժիշկները սկսել են հրաւեր կարգաւ ուստ հասա-րակութեան, որ գնան բժշկվելու Կովկասեան հանքային ջրերը, արտասահմանեան կուրորաների տեղ, և գնալու գրեթէ բոլորներն, յոգեւածներ հրատարակելով—որոնց ամենի նպատակն է ա-պացուցանել, որ Կովկասեան հանքային ջրերը իրանց գիւրգիլ, կլիմայով, բժշկական միջոցներով ոչ մի բանով ստոր չեն արտասահմանեան կու-րորաներից, այլ մինչև անգամ գերազանցում են նրանց,—աշխատում են ուղղել հիւանդներին դէպի այդ ջրերը: Եւ նրանց յորդորը, աշխատու-թիւնը չեն մնացել չձայն բարբառոյ յանապա-տի: Ոչ միայն Ռուսաստանից, այլ և մեր Կով-կասից, ահազին բաղմութիւն սկսել է յաճախել Կովկասեան հանքային ջրերը և իր բժշկութիւնը այդտեղ որոնել: Բժշկվելու համար եկողների թի-ւը իւրաքանչիւր տարի աճում է և Կովկասեան հանքային ջրերը դառնալով աւետեաց երկիր, մնացել է, այնու ամենայնիւ, դեռ շատերի հա-մար, մասնաւոր մեր հայերի համար terra incog-rita, թէ և այդ ջրերի մասին մի ամբողջ դրակա-նութիւն է ստեղծվել ուսանողի մէջ:

Ներկայ յոգեւածիս նպատակն է մանրամասն կերպով ծանօթացնել հայ հասարակութիւնը այդ կուրորաների հետ:

Հանքային ջրերի մէջ տիեզերական հաշակ ու-նեցողներն են եւրոպական ջրերը—Կարլսբադ, Մարիէնբադ, Վիլնի, Էմս, Ալէն, Կիսսէնգէն և այլն, ուստի և այդ ջրերից ամեն միւր իւրաքան-չիւր սէզոն ունենում է տասնեակ հազարներով յաճախորդներ: Դրա պատճառն այն է, որ Եւրո-պայի այդ հանքային ջրերը վաղուց յայտնի են և նրանց մասին հազարաւոր հեղինակութիւններ կան գրված, որոնք տարածում են այդ հանքային բուժարանների անվիճելի կարեւորութեան և օգ-տակարութեան մասին ընդհանուր համոզմունք. բացի դրանից, ունեն ամեն տեսակ յարմարու-թիւններ, վերին աստիճանի բարեկարգված են, և

որովհետեւ կառավարութիւնները ու հասարակու-թիւնը շատ վաղուց ձեռնարկել են բարեկարգու-թիւնների մտցնելուն, ուստի այդ և եւրոպական հանքային ջրերից մի քանիք զարգացման ամենա-բարձր աստիճանին են հասած: Այդ է պատճառը, որ մինչ Կովկասեան չորս հանքային ջրերի խմբը յաճախորդների թիւը Նոյն իսկ այժմ 7000-ի չէ հասնում, արտասահմանեան կուրորաներից ամեն միւր տասն, քսան հազար յաճախորդներ է ունե-նում:

Կովկասեան հանքային ջրերը գտնվում են Թե-րեքեան նահանգում և բաղկացած են չորս խմբից կամ գրուպաներից, այն է Պետրիգորսկ քաղա-քային և Ժեյնգիսովդոլսկ, Էսսենտուկի և Կիսսե-վոլսկ կաղակային ստանիցաներից: Այդ հանքա-յին ջրերը կապույց ծովից հեռու են 300 վերս-տով, Բոստովից 280, Սե ծովից 500, իսկ Թեթ-լիսից 400 վերստով: Թիֆլիսից հանքային ջրերը գնալու համար պէտք է Կովկասեան սարերի ճանա-պարհով, կառքով գնալ Վաղդիկապուլ, իսկ այդ-տեղից երկաթուղով մինչև Պետրիգորսկ 200 վերստ է:

Կովկասեան հանքային ջրերի վրա առաջին անգամ ուղարկութիւն դարձնողը լինում է Մեծն Պետրոս, որը 1718 թ. յանձնեց իր բժիշկ էյլը-մէդիկ Զոբէրին զինել Թեթեք գետի վրա գտնվող հանքային ջրերը: Զոբէր իր հետազոտու-թեան մէջ յիշում է և Բէշտաու սարի տակին գտնված տաք ջրերի և հաշակաւոր Նարդանի մասին: Այդ տեղերը գտնվում էին լեռնաբնակ չէթեքներին ձեռքին: 1780 թ. յայժմեան Պետրի-գորսկ քաղաքի տեղում հիմնվում է Կոնստան-տինոգորսկ ամրոցը, Մաշուկ և Բէշտաու սա-րերի տակին: Այդ ժամանակից Մաշուկի տակից բղիթող աղբիւրը, որ կոչվում է Տաք աղբիւր և Նարդան աղբիւրը սկսեցին հաշակ ստանալ և հի-ւանդներ թէ Ռուսաստանից և թէ Կովկասից խումբ-խումբ դիմում էին այստեղ բժշկվելու, միայն երկ-րի անխաղաղութեան պատճառով, հիւանդները

ստիպված էին բնակվել ամրոցում, իսկ աղբիւրնե-րի ջրերը խմելու համար նրանք դնում էին զօր-քի ընկերակցութեամբ:

Երբ երկիրը խաղաղացել և վերջնականապէս ըն-կաւ ուսուց պետականութեան տակ, Կովկասեան հանքային ջրերը սկսեցին հետզհետէ զրաւել հի-ւանդներին և արդէն 1809, 1810, 1811 և 1812 թ. կանաններն կանոնաւոր կուրսեր սկը-վեցին: 1811 թ. ին Ռուսաստանից մօտ 200 ընտանիք է դախտ: Սակայն երկար ժամանակ այդ ճանապարհորդութիւնը համարվում էր վը-րտանգաւոր և դժուարին ու շատ թանկ էր նստում, որովհետեւ նախ երկիրը պատերազ-մական էր, երկրորդ ոչ թէ երկաթուղի, այլ և յարմար ճանապարհներ չը կային, ապրելու հա-մար յարմարաւոր բնակարաններ չը կային, հան-քային ջրերի յատկութիւնները լաւ հետազոտված չը լինեցով, բժիշկները իրանք դժուարանում էին ուղարկել հիւանդներին այդտեղ, և աւելի բար-ւոք էին համարում ուղարկել արտասահմանի ջրե-րը: Այդ պատճառով երկար ժամանակ Կովկա-սեան հանքային ջրերը մնացին անյայտ և շատե-րի համար terra incognita, մինչև որ կառավա-րութեան և գիտական հաստատութիւնների ու մասնաւոր բժիշկների ձեռքով կատարված ու-սումնասիրութիւնները, ինչպէս և մի քանի եւրո-պացի գիտնականների (ժ. Ֆրանսուա, Լէոն Դը-րիւ) հետազոտութիւնները ապացուցին, որ Կով-կասեան հանքային ջրերը իրանց բազմազանու-թեամբ կարող են ոչ միայն փոխարինել արտա-սահմանեան շատ ջրերին, այլ իրանց համալմա-մամբ, մինչև անգամ գերազանցել:

Վերջին Եւրոպայում, ասում է Ժիւլ Ֆրան-սուա, չը կայ այդքան բազմազան աղբիւրների այդպիսի համալմութիւն մի համեմատաբար փո-քոր տարածութեան վրա, ինչպէս Կովկասեան հանքային ջրերում: Կասկած չը կայ, որ երբ կա-րեոր տեխնիկական աշխատութիւնները կատար-վեն, Կովկասեան ջրերը եւրոպական ամենալաւ

նակ նրանք միաճամբու ոչով կարող են պաշտպանել խաղաղութիւնը և ճշմարտ գործել այն առանձին պետութիւնների վրայ որոնք կը ցանկանային անարդար ձեռով բռնադատել զիրար ստեղծել իրանց համար ի վնաս ազգութիւնների ընդհանուր շահերի:

Խաղաղութեան գաղափարը ապագայ ունի բայց նրա աջողութեան համար պահանջվում է նախապատրաստական գործունէութիւն, որ ժամանակ է պահանջում և զուգէ դառն փորձեր:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱԿԱՍ ՍՈՎԵՏՆԵՐԻՆ ԵՒ ԳԱՊԹԱԿԱՆՆԵՐԻՆ

Արանից երկու շաբաթ առաջ առիթ ունեցանք լինել Էջմիածնում մի քանի օրով: Մենք չէինք հետաքրքրուում ոչ միաբանութեան ու Ղազարապատի խնդրերը լցնող փափոցներով և անվերջ բախտանքներով, ոչ երեւիա եպիսկոպոսի նոր շինութիւնով և Նիկիտինի շուրջ, ոչ էլ սինոդում կայացնող պատկերային խնդիրներին վերաբերող վիճարկումով: Էջմիածնին պատու է միայնակ միջնորդը, որ կարծես երկրորդական է այնպիսի միջնորդը, որ կարծես երկրորդական է համարվում ոչ միայն քանանայական հարցը, այլ և ձեռնարանի գրութիւնը, մեր ուսումնարանների ապագան:

Մենք հետաքրքրվեցինք իմանալ, թէ ինչ են մտածում այստեղ գաղթականների մասին, որ այսօր ամենակարեւորն է: Անհրաժեշտ է ամեն կողմից մտածել տով մասին, գաղթականների դրութեան վրա...

Հարցը ունի մի քանի կողմեր, որ Էջմիածնում էլ լաւ հասկանում են: Ա՛յ՛, համար պարզ չէ, արդեօք, որ գաղթականութիւնը անբերրութեան հետեանք չէ միայն: Դա շատ լաւ գիտեն նոյն իսկ իրանք՝ թշուառ աղակերպները, խնուսեցիկները, բախտեցիկները: Սակայն թողնենք պատճառները:

Ինչպէս օգնել, որ գաղթականների թիւը չը շատանայ, որ ամենքին դոնացում տրվի, որ ներքին վերադառնան իրանց բնակավայրերը, չը սովորեն ծուլութեան և այլն,—ահա այսօրվայ ամենակարեւոր խնդիրը:

Սրբ աշխարհ սկսվեց գաղթականութիւնն ու տեղական սովակների հոսանքը Գեօկչայից, Ա-

հանքային ջրերի շարքում փառաւոր տեղ պէտք է բռնեն:

Եւ կառավարութիւնը, թէ և ուշ, բայց հասկացաւ հանքային ջրերի բարեկարգութեան կարեւորութիւնը, ուստի և վերջին ժամանակներում բազմաթիւ կառավարչաօրէնքներ են տեղի ունեցել: Սկզբում այդ ջրերը կապալով տրված էին յայտնի Բայիօվ կապալառէին, որը միայն իր գրպանը լցնելու ետեւից էր: Նրանից յետոյ կառավարութիւնը սկսեց ինքը շահագործել, նշանակելով կառավարական տեսուչ կամ կոմիսար: Առաջին կոմիսար նշանակվեց Եղեպիկին, յետոյ Սուլէյմանի և վերջապէս, որը նկատվեց որ Կովկասեան հանքային ջրերը ղեռ կարող են շատ բարեկարգութիւններ, անցնել տարի կոմիսար նշանակվեց պատուաւոր լէյտ-մէյէրի Բէրեքիսովը, որը յայտնի է իբրեւ լուսամիտ բժիշկ և փորձագետ ու եռանդոտ աղմկեղծարար:

Եւ ճշմարիտ, Բայիօվի կառավարութիւնից յետոյ շատ նշանաւոր բարեփոխութիւններ են կատարվել: Հանքային ջրերի շուրջ խմբերը միմեանց հետ կապված են գեղեցիկ շօսք: ճանապարհներով, իսկ անցնալ տարվանից—և երկաթուղու գնացքներով: Մինչև անցնալ տարի հիւանդները հասնելով Վիկտորիայի վոդէ կոլմած երկաթուղու կայարանը (Վալդիկալկասի և Բոստովի մէջ տեղ, այդտեղից դէպի հանքային ջրերի առաջին խումբը—Ճեկեղնովօղսկ 10 վերստ է) ստիպված էին կառք վարձել և կառքով դնալ ջրերը և այդ բաւական թանկ էր նստում: Այժմ այդ կայարանից երկաթուղու մի ճիւղ է դնում բոլոր 4 խմբերի մէջով: Օրական 5—6 անգամ գնացքները երթնելով թիւն են անում և բժշկուհիները կարող են մի և նոյն օրը այցելել բոլոր չորս կուրորտներին ևս—Ճեկեղնովօղսկ, Պետրիօրսկ, Լաւնտուկի և Կիսլովօղսկ (այս չորս գրուպաների տարածութիւնը ընդամենը 35 վերստ է) և երկրային վերադառնալ, իրանց բնակարանը:

Բոլոր 4 խմբերում չինված են գեղեցիկ, զով

բարանից, Երազեակից դէպի զանազան տեղեր և միջի այլոց դէպի Էջմիածն—վերջինս վրա պարտք դրվեց՝ օգնել կարտեսներին... Եւ վաղը չէր կարող չօգնել իրան դիմողներին: Օգնութիւն էր հասցնում ալիւր, ցորեն, թխած հաց, կերակուր բաժանելով, հաց «փոխ» տալով մօտակայ կարտեսի գիւղացիներին, և վանքի ամբարներից ցորեն դուրս տալով աւելի ցածր գնով, քան մասնաւորներն էր:

Մենք առաջ կը բերենք մի քանի թւեր, որ հաղորդեցին այստեղ պատճառական աղբիւրներից: 1893 թւականին Էջմիածնի փոխ տեղ մօտ 8300 պ., աղբաւորներն ըստմենք է մօտ 1065 պ. վաճառված է էժան գնով մօտ 21,180 պուլ:

1894 թւին նոյն ընթացքը շարունակվում էր: Մինչև յունիսի վերջերը տրված էր ողորմութիւն մօտ 1410 պ., «փոխ» էր առւած մօտ 5490 պուլ: Անշուշտ օգնութիւնը աւելի կը լինէր, եթէ շտեմարանում հաց մնար: Գժաղաբար, չնորհւանցեալ տարվայ վատ բերքին, տասնորդ շատ քիչ էր ստացված և յունիսի 22-ին վանքի շտեմարանում մնում էր միայն 10—12 խալվար ցորեն և մօտ 60 խալվար ալիւր:

Վերև բերված թւերի մէջ չէ այն օգնութիւնը, որը հասցրել է վանքի ճաշարանը թխած հացով ու կերակրով:

Բայց չէ որ Էջմիածնի ամեն կողմից օգնութիւն էր ստանում փողով, զանազան միջոցներով: Դրա հաշիւը առանձին յանձնաժողովի ձեռքին է: Բացի ճիշին 1200 բուրդուց, որը ծախված է վանական կառավարութեան ձեռքով վանքի հաշիւից, յանձնաժողովը ստացել է նոյնիման 16-ից սկըսած 32,350 բ. 85 կ. և մինչև յունիսի 22-ը ծախսել է 22,720 բ. 54 կ., ուրեմն յանձնաժողովի ձեռքին մնում է 9,630 բ.: Յանձնաժողովի 22,720 բ. ծախսի կէտերից յիշենք մի քանիսը.

1) 4,500 բ. ծախված է Մետրոպ վարդապետ և Ղանդա սարկաւազի ձեռքով: Աբարան, Դարա-չիպաք և Երազեակ:

2) 4,000 բ. ծախված է Թաւաքաւան և Նա-հապետեան վարդապետների ձեռքով: Գաղթականների կարիքներին համար:

3) 2,000 բ. ուղարկված է Կ. Պոլսի պատ-րիարքին: Պատրիարքական փոխանորդը յայտնել է, որ ժամանակին մանրամասն հաշիւ կուղարկվի այդ փողերի գործածման մասին:

4) 5,000 բ. մայիսի 31-ին, արտաքին գործերի մինիստրութեան միջոցով, փոխադրված է Էրզրում,

ժողովաւորներ (պարկ), կան արքեւանական ճաշարաններ, որտեղ բաւական է ժան գնով կարելի է ձաշել: ամեն օր, առաւօտեան և երեկոյեան զինւորական երաժշտութիւնը նուազում է. կան ընթերցարան-դրամոններ, կառքերը քարտէսական են և որոշ տակա կայ, այնպէս որ կառավարների հարստահարութիւններից աղաւ էր, բայց ինքները յարմարեցրած են և ունեն տէխնիկական բոլոր կառարկանքներով: Իսկ Ճեկեղնովօղսկում անցնալ տարի կառուցված է մի գեղեցիկ և զեղարուեստական հոյակապ շինութիւն—նոր բաղնիքներ, յարմարեցրած ժամանակակից գիտութեան բոլոր տէխնիկական պահանջներին: Այդ բաղնիքները, ի պատիւ նախկին մինիստր Օստրովսկու, կոչվում են Օստրովսկեան բաղնիքներ: Բացի դրանից մի վերին աստիճանի կարևոր և առողջապահական դպրոց է կառարկւած. բոլոր չորս խմբերը մօտակայ սարերից խողովակներով բերված սառն և վճիտ ջուր ունեն խմելու համար: Կան և բաւական թիւով բնակարաններ և զանազան հիւրանոցներ, բայց պէտք է ասած—և այդ է զիկաւոր անկարգութիւնը—որ վարձի գնելը բաւական թանկ էր: Միջին հաշիւով կարելի է ունենալ մի սենեակ 25—75 բ., իսկ բնակարան 3—4 սենեակից՝ 300—700 բ.: Բնակարանների և սենեակների գները մանաւանդ թանկ են լինում յուլիս ամսում, սկզբին ամենաթանկ ժամանակ: Դրա փոխարէն ուտելիքը բաւական է ժան է, մանաւանդ կաթը, կարագը, վառիկները: Բժիշկների կողմից ևս ոչ մի պակասութիւն չը կայ: Հանքային ջրերի կառավարութիւնը գտնվում է կառավարական կոմիտեի ձեռքում, որի բնակատեղին է Պետրիօրսկ, իսկ նրա օգնականներն են խմբային բժիշկները, այն է ամեն մի խումբ ունի մի պաշտօնական բժիշկ, որի պարտաւորութիւնն է հսկել, որ բաղնիքներում, առաջանքներում, հիւրանոցներում, ճաշարաններում ամեն բան կարգին լինի, մաքրութիւն տրել և այլն: Որ և է դանդաղ կամ յայտարարութիւն

Շինանհան եպիսկոպոսի ձեռքով, Էրզրումի վի-լայէթի ժողովրդին օգնելու համար:

5) 442 բ. մայիսի 18-ին Ալաշկերտ վերադարձող 15 ընտանիքներին (63 հոգի):

6) 289 բ. հայրենիք վերադարձող գաղթականների մի ուրիշ խմբին (23 ընտանիք):

Գաղթականներին օգնելու օգնութիւն է հասցրել այն շորեղէնը (չիթ, կտաւ, գուլպա, կոշիկ) որ ուղարկել են Մոսկվայից, Բաքուից, Երեւանից և այլ տեղերից:

Էջմիածնում էլ կարծում են, որ հարկաւոր է օգնել ժողովրդին բուն երկրի մէջ և գաղթականներին վերադարձնել: Ցանկալի է, որ ինքը հասարակութիւնը գտնէր մի այդպիսի օգնութեան ճանապարհ:

2.

ՈՍՍՈՒՑՁԱԿԱՆ ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ԴԻԱՄԱՐԿՂ

Մեր դպրոցների ուսուցիչների համար խնայողական-փոխառու կասա հիմնու հարցը, որի վրա շատ տարբեր ընթացքում առանձին ուղի է դարձրել մեր մասուրը, դարձեցնում է Էջմիածնի ուսումնարանական յանձնաժողովին: Ահա թէ այդ մասին ինչ է հաղորդում Էջմիածնի պաշտօնական օրգանը.

«Գեկտեմբերի 31-ի նիստում նախագահն արձարեց և պաշտպանեց ուսուցչական—խնայողական դրամարկղի հարցը և առաջարկեց Յանձնաժողովին նախաձեռնող հանդիսանալ այս մեծ գաղափարի իրագործման համար: Բոլորիս արդէն պարզ յայտնի է, թէ ինչ նեղ վիճակի մէջ են դնում մեր ուսուցիչները և թէ քիչալիս անորոշ և անապահով տպագայ է սպասում նոցա, յաճախ պատահում է, որ նոցանից շատերը տկարութեան կամ ծիրարկեան պատճառով միանգամայն անկարող լինելով դործելու, ստիպված հրաժարվում են ուսուցչական ասպարէից և երբեմն ամբողջ ընտանիքով բնիւնում են ներթափալէս ամենաանտանելի վիճակի մէջ: Դրա միակ փրկարար միջոցն ուսուցչական խնայողական դրամարկղի հաստատուն է, որ մի հանրօրէն և մարդասէր դործ է: Թէ և այս խնդրի մասին բազմիցս թէ լրագրութեան և թէ այլ չըջաններում երկար գովել և խօսվել է, ասկայն մինչև այժմ իրապէս ոչ մի հետեանք չեն հասել: Արդէն այս խնդիրը բոլորովին հաստեացած է:

«Յանձնաժողովի անդամներն ընդունեցին նայր

ունեցող կարող է դիմել կամ կօմիտարին կամ խմբային բժիշկին:

Կովկասեան հանքային ջրերի բժշկութեան սկզբին համար առանձին կանոններ կան հրատարակված 1892 թւի փետրվարի 21-ին, պետական կալուածների մինիստրի կողմից: Այդ կանոններով պէտք է զեկալարվին բոլոր հիւանդները: Ի հարկէ, այդ կանոնները խախտում են շատ կամայականութեամբ և կարգաւորում են հիւանդները փոխադարձ յարաբերութիւնները: Շատ լաւ կը լինէր, եթէ այդ կանոնները հրատարակվէին և հայերէն, թուրքերէն ու վրացերէն լեզուներով: Մեզ հանդիպեցին այնպիսի անձինք, այդ ազգերից, որոնք չէին ապով ուսուցիչներ, չը գիտէին ինչ անեն, ո՛ւմ դիմեն, չը գիտէին որտեղ ինչ ջուր է ծախվում, որքան պէտք է վճարել և այլն: Այդ տեսակ անլեզուագէտները, ընկնելով զանազան ափէրկտներին ձեռքը, բաւական տուժում են:

Շնորհիւ վերոյիշեալ բոլոր բարեկարգութիւններին, Կովկասեան հանքային ջրերը բաւական մեծ թւով բժշկուհիներ և այցելուներ են դրաւում, մօտ նաւանդ վերջին տարիներս: Բացի հիւանդներից և շատ առողջներ ընտանիքով գալիս են հանքային ջրերը իբրեւ ամբարան, թէ և իբրեւ ամբարանոց, յարմարութիւն ունի միայն Կիսլովօղսկի խումբը:

Ահա մի քանի վիճակագրական տեղեկութիւններ Կովկասեան հանքային ջրերի 4 խմբերի այցելուների վերաբերմամբ:

1878 թ. հ. ջրերում բժշկվում էին	2873 հիւանդ
1879 թ.	3370
1880 թ.	3961
1881 թ.	3554
1882 թ.	4045
1883 թ.	4290
1884 թ.	4500
1885 թ.	6000

նախագահի առաջարկութիւնն իբրեւ սկզբունք և որոշվեցաւ, որ Յանձնաժողովի իւրաքանչիւր անգամն ուսումնասիրէ, մշակէ ուսուցչական խնայողական դրամարկղի հարցը, յաջորդ նստերին ներկայացնէ իր դիտողութիւնները քննելու համար և ապա թէ վերջնական եզրակացութիւնը ներկայացնել վեհափառ Հայրապետի բարեհայեցողութեանը:

Մենք չը գիտենք, արդեօք, ուսումնարանական յանձնաժողովը այդ կարևոր հարցը մշակել է, թէ թողի է անհետեանք: Այսպէս միայն գիտենք, որ ինքը ուսումնարանական յանձնաժողովը այժմ գոյութիւն չունի, և դրամարկղի հարցի հետ ուղի շատ հարցեր քննել են խոր քննով:

ՆԱԿԱՍ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Շուշի, յուլիսի 16-ին

Ղալարադի թիմական դպրոցի հոգաբարձութեան պաշտօնական հերքման տակ, որ լոյս է տեսել «Մշակի» մէջ, չը կան մեր ստորագրութիւնները, որովհետեւ այդ գրութիւնը կազմուել ժամանակ մենք բացակայ էինք քաղաքից:

Ուրպէս զի այդ մասին չը ծագեն որ և է թիւրիմացութիւններ, մենք մեր պարտքն ենք համարում յայտնել, որ ներկայ ենք գտնվել հոգաբարձութեան կատարած մանրամասն քննութեան սկզբից մինչև վերջը, որից եկել ենք նոյնպէս այն արդար եղբակցութեան, որ տեսուչ Վ. Սարգսեանցը միանգամայն անմեղ է, իսկ նրա դէմ լարած դաւադրութիւնը արդիւնք է մի քանի ինտրիգանների անհիմն գրգռարթութիւնների և անձնական կրքերի:

Հոգաբարձուներ՝ Ստեփան Իւղբաշեանց

Կ. Մ. Շահապարեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կ. Պոլսից մեզ գրում են յուլիսի 13-ից, «Այս օրերս մօտ 100 հայեր, որոնք որ և է յանցանք չունեն, բայց բանտարկված էին, բանտէն ազատվեցան: Ասոնք մեծ մասամբ մեղադրուածներն և փոխառականներն աղակականներն, բարեկամներն և ծանօթներն են:

Մեզ հաղորդում են, որ Կարսում գաղթականների և սովակների համար բացված է ժամադին ճաշարանը այս օրերս փակվեց:

Ներկայ 1894 թ. սկզբում բժշկուհիների և այցելուների թիւը հետեւեալ կերպով է հրատարակված մինչև այս յուլիսի 12-ը:

1) Պետաիդօրսկի խմբում 2639 հոգի, 2) Ժեկեղնովօղսկի (1076), 3) Լաւնտուկի (1195), 4) Կիսլովօղսկի 1132, ընդամենը 6042 հոգի:

Թէ և այս համեմատական թուանշանները ցոյց են տալիս, որ տարուց տարի այցելուների թիւը աճում է, բայց աճում է խիստ դանդաղ կերպով: Այդ դանդաղութիւնը աւելի զգալի կը լինի, եթէ ասենք, որ արտասահմանեան կուրորտների այցելուների թիւը իւրաքանչիւր սկզբն անհամեմատ շատ մեծ է լինում, օրինակ 1883 թ. Վիշի եղել է 9486 հոգի, Մօսկո եղել է 27,613 հոգի, իսկ Կարսը, Էմա, Իշլ լինում են տասնեակ հազարներով:

Եւ ահա մինչ արտասահմանեան մի հատ կուրորտ միայնակ ունենում է 10—20 հազար հիւանդներ, Կովկասեան հանքային 4 խմբերը միասին 7000 ևս չեն ունենում:

Ինչ է պատճառը, որ Ռուսաստանի ժողովուրդը աւելի զերադատում է արտասահմանեան, քան հայրենի կուրորտները: Պատճառը, տարակոյս չը կայ, այն է, որ արտասահմանեան կուրորտները աւելի շատ յարմարութիւններ են ներկայացնում, որոնցից Կովկասեան հանքային ջրերը ղեռ դուրկ են, թէ և հասարակութեան մի մասը գնում է արտասահման լոկ աւանդաբար, որովհետեւ արտասահման է... Այնու ամենայնիւ, ուսումնասիրելով այդ երեւոյթի զլխաւոր պատճառը տեսնում է նրանում, որ հայրենի հանքային ջրերը չեն օժտված բոլոր հարկաւոր կառարկանքներով: Իսկ նրա օգնականները և յոյս է տածում, որ կը դա ժամանակ, երբ ոչ միայն Ռուսաստանի բնակիչները կը դաւադարեն արտասահմանի կուրորտները դնալուց, այլ նոյն իսկ արտասահմանից շատ հիւանդներ կը դիմեն Կովկասեան հանքային ջրերի օգնութեան:

Հ. Ա.

ներկայ հանրապետական կառավարությանը:—
Այս է գրված ընացիմանալիս: կուսակցության
դրոշակի վրա:

Մ/ք:

ԱՐՏԱԲԻՆ ԼՈՒՐԵՐ

—Կ. Պոլսի «Figaro» լրագրին հաղորդում են,
որ զինվորական մինիստրության պաշտոնային Արիդ
փաշան Բաղդադ աքաղաղեց այն պատճառով, որ
նա թողեց իր պաշտոնը երկրաշարժի ժամանակ:
Նույն-ընթաց, թիւրքաց կայսերական թիկնապահների
գնդապետը զուրա թեւա պատուհանից երկրա-
շարժի ժամանակ և տեղի ու տեղը սպանվեց:

—«Ind Belge» լրագրին Կ. Պոլսից հաղորդում
են, որ սերբիական թագաւորի Կ. Պոլսի գնալը
առանց հետևանքի չը մնաց: Այդ հետևանքները
հետևանքներ են. կը նշանակվեն սերբիական և
պիսկոպոսներ Ոսկւրում և Պրիզրենում և Կ. Պոլ-
սի արեւելքական սինոդում կը գտնվեն սերբիական
երկու անդամներ և սերբիական միտրապոլիտը կը
ստանայ պատրիարքի տիտղոս: Սերբիայում շատ
գոհ են իրանց թագաւորի Կ. Պոլսի գնալու հետե-
ւանքներից:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

ՇԱՆՆԱԿ, 18 յուլիսի: Չինական և եւրոպական
զինւորական նաւերի մէջ տեղի ունեցաւ պատերազմ
յուլիսի 15/27-ին: Կատալի կռիւն յետոյ, եւրոպ-
ականները գրաւեցին չինական նաւը առող նաւը
և ակամային միջոցով, Շալիօն կղզու մօտ, ծո-
ված: Եւրոպական «Kow-Shing» տրանսպոր-
տը նրա վրա գտնվող 1500 հոգուց բաղկացած
զորաբաժնով, որոնցից Ֆրանսիական «Lion» նա-
ւը առաջինը միայն 40 հոգի «Kow-Shing» նաւի
վրա գտնվող բոլոր եւրոպացի ծառայողները կամ
պատերազմում ընկան կամ խեղդվեցին:

ՇԱՆՆԱԿ, 18 յուլիսի: Սպանացիները են
ցամաքային զորքի և նաւատորմի պահեստի զոր-
քերը: Եւրոպական ապրող չինացիները հեռա-
նում են անպահ խմբերով: Եւրոպական զորքերը
գրաւեցին թագաւորական պալատը Սեւիում:
Նրանց յետոյ, երբ կորչական կառավարութիւ-
նը մերժեց եւրոպական դեսպանի պահանջը՝ ան-
պատճառ կորչեցին հեռացնել չինական զորքերը,
կորչեց թագաւորը զինեց եւրոպական պետու-
թիւնների ներկայացուցիչներին նրանց միջամտու-
թիւնը խնդրելով:

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 19 յուլիսի: Այսօր ժամանեցին
Պետերբուրգի թագաւորական Յէսարվիլը և Դանիայի
թագաւորական իշխանի անդամիկ որդին, պրինց
Խորտհանը: Նախահանդեսում Նոյն Բարձրու-
թիւններին զինուորիցին թագաւորի կայսրունին և
յունաց Մարիա թագուհին:

ՇԱՆՆԱԿ, 19 յուլիսի: Նրէկ եւրոպացիները խոր-
տակեցին չինական «Chen-Yuen» զրահակիր նաւը:
Այսու ևն, որ եւրոպացիները գերի վերցրին
կամ խորտակեցին էլի երկու մեծ չինական նա-
ւեր «Chen-Yuen» չինական նաւատորմի ամենա-
մեծ և ամենանոր կազմի զրահակիր նաւն էր:

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳԻ ԲՈՐՍԱ

Յուլիսի 19-ին

Լոնդոնի վրա 10 ֆունտ արծէ . . .	93 ր. 10 Կ.
Բեռլինի վրա 100 մարկ . . .	45 ր. 62 Կ.
Պարիզի վրա 100 ֆրանկ . . .	36 ր. 92 1/2 Կ.
Ոսկի . . .	արծէ . 7 Կ. 46 Կ.
Մարսայի կուպոններ . . .	149 Կ. 25 Կ.
Արծաթ . . .	5 Կ. 7 Կ.
Բորսայի դիսկոնտ . . .	5 Կ. 7 Կ.
Պետ. բանկի 5% տոմս 1 շրջանի . . .	2 ր. 7 Կ.
— 2 ր. 7 Կ. . .	2 ր. 7 Կ.
— 3 ր. 7 Կ. . .	3 ր. 7 Կ.
5% ոսկեայ բենտ 1884 թ. . .	159 Կ.
4 1/2 ոսկեայ փոխառութիւն . . .	240 Կ. 50 Կ.
Արեւելեան 5% փոխառ. 1-ին շրջ. . .	226 Կ. 50 Կ.
— 2 ր. 7 Կ. . .	226 Կ. 50 Կ.
— 3 ր. 7 Կ. . .	226 Կ. 50 Կ.
— 4 ր. 7 Կ. . .	226 Կ. 50 Կ.
Ներքին 5% առաջին փոխառութիւն . . .	101 Կ. 75 Կ.
— երկրորդ . . .	101 Կ. 75 Կ.
Պետական երկաթուղային բենտ . . .	101 Կ. 75 Կ.
4 1/2 բենտ . . .	95 3/8 Կ.
4% ներքին փոխառութիւն . . .	95 3/8 Կ.
5% գրաւ. թղթ. ագն. կալ. բանկի . . .	93 Կ. 25 Կ.
Ագն. կալ. Պետ. բանկի խաղարկութիւն . . .	93 Կ. 25 Կ.
Գրաւ. թղթ. . .	93 Կ. 25 Կ.
4 1/2% վրայակ. դիւլ. հող. բանկի . . .	93 Կ. 25 Կ.
4 1/2% գրաւական թղթեր կալուած . . .	153 Կ. 25 Կ.
Պետ. կրթութ. ընկեր. մեծաւ . . .	153 Կ. 25 Կ.
— թղթաւ . . .	153 Կ. 25 Կ.
Պետերբուրգի քաղաքային կրեդիտ . . .	101 Կ. 25 Կ.
— ընկերութեան օրինակներ . . .	101 Կ. 25 Կ.
Մոսկվայի քաղաք. օրինակներ . . .	101 Կ. 25 Կ.

Օղէտայի . . .	101 3/8 Կ.
Թիֆլիսի . . .	99 Կ.
Գրաւ. թղթ. Թիֆլիսի կալ. բանկի . . .	100 Կ.
— Գրաւ. թղթային . . .	101 Կ.
Ս. Պետերբուրգի բորսայի տրամադրութիւնը . . .	ամուր է:

Խմբագիր՝ Ա.Լ.ԲԱՆՆԱԿԻ ԲԱՆԱԿԱՆ
Հրատարակիչ՝ Մ. ՄԵԼԻՍԻԱՆԱՅԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱԽՈՐ
ՀԻՄՆԱԿԱՆՈՅ

Բ. ՆԱԽԱՍԱՐԳԵԱՆԻ
(կուկիա, վարձարարի արձանի հանդէպ)
Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի
կիրակի օրերից:

ԱՌԱՋՈՏՆԵՐԸ՝
Բ. ՆԱԽԱՍԱՐԳԵԱՆԻ—11—12 Ժ. վիրաբու-
ժութեան և վնասական (սիֆիլիս) հիւանդու-
թիւնների:
Կ. Գ. ՉԻԿՈՎԱՆԻ—9—10 Ժ. աչքի և նեար-
դային:
Գ. Գ. ԲՈՒԿԻՆՈՎԱՅԻ—10—11 Ժ. ներքին, երե-
խաների և կանանց:
Ա. Գ. ԳՈՐԻՅՈ—1—1 1/2 Ժ. ականջի, կոկորդի,
և քթի:
Վին. քթիչ ՏՈՒՐԿՈՎԻՉ—12 1/2—1 Ժ. կանանց ց.
Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԱՆ—1—1 1/2 Ժ. ներքին և երե-
խային:
ԵՐԵՎԱՆԵՐԸ՝
Ա. Գ. ԳՈՐԻՅՈ—6—7 Ժ. սիֆիլիսի և մէզի ու
սեռական օրգանների:
Բ. Ա. ՆԱԽԱՍԱՐԳԵԱՆԻ—7—7 1/2 Ժ.
Ի. Ե. ՖԻՍԻՆՈՎԻՍ—7—7 1/2 Ժ. ականջի, կոկորդի
և քթի ու նեարդային:
Ա. Գ. ԳՈՐԻՅՈ քիմիական և խոչորացուցական
հետազոտութիւնների և անոթ մէզի, խիւի, ա-
րեան, կաթի և այլն:
Վճար 50 Կ.: Համախոչորդի (կոսիլիտով) դ
օպերացիայի համար առանձին: Հիւանդանոցումը
ընդունվում են և ԳԻՇԵՐՈՒԿ ՀԻՄՆԱԿԱՆՆԵՐ:
Հիւանդանոցի վերապետը:
ԲՈՒՄԱՍԱՐԳԵԱՆԻ (Ն 72)

Ս. Խաչ վանքի ժառանգաւորաց զարդի
համար հարկաւոր է ՌՈՍՏԱՅ ԼԵՂՈՒԻ ՌԻ-
ՍՈՒՅԻՉ: Պայմանների մասին զիմէ վանքի
վանահօրը, հեռուէն հասցէով: Насоя-
телю армянского Монастыря. Нахичевань на
Дону.
2—3 (Ն 82) Եփրեմ վարդապետ

ՄԻ ՎԱՐԺՈՒՂԻ

Յանկանում է որ և է զարդում ձեռա-
գործի և կար ու ձեռի դասեր ունենալ:
Հասցէն կարելի է իմանալ Մշակի՝ Լըմ
բաղրատումը:
(Ն 81) 2—4

Խնդրվում է հայ հեղինակներին, թարգ-
մանիչներին և առհասարակ ցանկացողնե-
րին, որ բարեհաճեն իրանց հեղինակու-
թիւնները, թարգմանութիւնները և ու-
նեցած զրբերը մի-մի կամ մի քանի օրի-
նակ նուիրել ԱՍԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ՊԱՆԴՈՒԹՅՈՅ-
ՆԵՐԻ

ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԻՆ

Յանկացողները պէտք է ուղարկեն այս
հասցէով. M-r N. Karapetian, 439, P. O.
Rox. WORCESTER, MASS, E. U.
d'AMERIQUE. 9—10

ԱՐԻՍ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԻ

ՌՈՒՍԵՐԵՆԻՑ-ՀԱՅԵՐԵՆ
ԲԱՌԱՐԱՆ

Ա. հատորի գինն է . . . 3 ր.
Բ. հատորինը . . . 4 ր.
Վաճառվում է խիղդիկի կրթական
նոցում, Գոյովիսկի պրոսպեկտ:
Գրավաճառներին 10% զիջում:
(Ն 58) 10—10

Ներկայումս Տէր-Վահագնի հրատարա-
կութիւնների պահեստը յունիսի 10-ին
մինչև առաջիկայ սկսածներին 1-ը յանձն-
ված է վնասողական գրավաճառանոցին,
ուր պէտք է զիմեն այդ զրբերի պէտք
ունեցողները:
(Ն 73) 8—10

Ազգիս Վեհափառ Հայրապետը հրամայել է գործադրել հայկական զարդաներում
որպէս ձեռնարկ, իմ աշխատանքում
"ՀԱՄԱՌՈՑ ԲՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԴԱՍԱ-
ԳԻՐԲԸ":

Յայտնելով այս ի գիտութիւն զարդական վարչութեանց՝ խնդրում ենք ցանկացողներին
առ այժմ զիմել ուղղակի մեզ այս հասցէով. ԹԻՖԼԻՍ, Երզնկեան փողոց, տուն № 45:
Գիրքը կաղմած է և արժէ՝ 1) հատով գնողներին 60 Կ., 2) տասնից մինչև յի-
սուն գնողներին 55 Կ., 3) յիսունից մինչև հարիւր գնողին 50 Կ., 4) զարդական
վարչութիւնից վկայված չքաւոր աշակերտներն ու աշակերտուհիները կարող են վճա-
րել 40 Կ.: ձանապարհածար գնողների վրա է:
2—25 (Ն 81) Սարգիս քահանայ Բէգնազարեանց

Թաւրիզի "ԱՐԱՄԵԱՆ" եւ "Ս. ԱՆՆԱՅԻ" ԵՐԿԱՆԻ ԳՈՐԾԱԿԱՆ ԴԱՄԱՐ ՀԱՐԿԱՆՈՐ ԵՆ
մի հմուտ հայ ուսուցիչ, որը պիտի վարէ նոյն զարդաների տեսչական պաշտոնը, այլ և շաբա-
թական 16 դաս. զաղղական ընդուն պիտի աւանդէ միայն Արամեան զարդանոցում:
Պայմանների համար խնդրվում է զիմել Թիֆլիսում պ. Ա. Մելիք-Ազարեանցին և պ.
Խոսրով Արզումանեանցին:
(Ն 79) 5—8

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Մ. ԴԵ-ԼԱ-ՅԱՐ ԵՒ ԸՆԿ.

կատարում է հետեւեալ օպերացիաները.
1) Տոկոսներ թղթերի ապահովութեամբ՝ փոխառութիւն.
2) I, II, III խաղարկութեան տոմսների վաճառումը, ԱՄՍԱԿԱՆ 5 ՐՈՒՐԻ
ՎՃԱՐՈՒՄՈՎ.
3) Փոխանակարներ է տալիս Ռուսաստանի գնաւորան քաղաքների վրա.
4) Ընդունում է ժամանակաւոր և մշտական աւանդներ.
5) Բաց է անում ընթացիկ հաշիւներ՝ չէկերով.
6) Ընդունում է in casso վէկներ և ուրիշ դոկումենտներ:
Լիազօր՝ Ս. Պ. ՊԱՎԼՈՎ. ԹԻՖԼԻՍ, Սերգիեյեւկայա փողոց, № 1.
Գանձաւորում գործակալն է՝ Նիկոլայ Կարամանովիչ ՕՏԱՆԵՍՈՎ:
(Ն 15) (Հ.) 24—50

питательный напиток

ЧУЧУ

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Սերգի Կահապետի վրա զարդաների վաճառումը և քաղաքում և քաղաքում

Սերգի Կահապետի վրա զարդաների վաճառումը և քաղաքում և քաղաքում

Սերգի Կահապետի վրա զարդաների վաճառումը և քաղաքում և քաղաքում

Գ. Կարգի, ցենզուր, ՄԻ ՌԻՍՈՒ-
ՑԻՉ, որը եղել է ուսուցչական ասպար-
զում 5 տարի, ցանկանում է պաշտոն ու-
նենալ հայոց զարդաներից մեկում:
Գիմել պայմաններով՝ Эривань. Священ-
нику Вачеяну. (Ն 80) 2—2

Ծախվում է Կովկասի բոլոր քաղաքների
հայ-գրավաճառանոցներում

ԱՍՐՊԵՏԵԱՆԻ
ԱՄՍԱՍ վէպը, բարձր հայոց իրական
կենտրոն—2 ր.
Խեի ԿԱՐԱՊԵՏ վէպը, թիւրքահայերի
կենտրոն—1 ր.
ՇՈՒՇԱՆ ողբերգ. օպերայի համար—1 ր.
ՍԱՐԲԱՍ ողբերգ. թիւրքահայերի պատ-
մական կենտրոն 30 կող.
(Ն 81) 2—5

Հայոց կրթական
"ՍԷՐ"
Ընկերութիւնը Թաւրիզում բաց է անում
ԳՐԱՎԱՃԱՐԱՆՈՅ: Սրանով յայտնում է, որ
կօմիսիոնով ընդունում է վաճառուէն դա-
սաղրբեր, զրբեր, բրդիւններ, պատկերներ
և ամեն տեսակ ուսումնարանական առար-
կաներ:
Դիմել՝ TAVRIS (Perse) Comité d'Inst-
truction arménienne "SER"
(Ն 81) 2—5

Усть-Ишимский завод

Ольфакториумъ Нудилинъ

М. Л. ЖИРМУНСКАГО.

Մ. Լ. ԺԻՐՄՈՒՆՍԿԻ
Ծախվում է 40 կողակով

Գեղազոր ծական Ապրանքների վաճառման Կովկասեան Ընկերութեան մէջ Թիֆլի-
սում:
№ 128 (91 թ.) 27—40